**Արձանագրություն N 3**
**«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

21 մայիսի 2019թ. ժ. 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հովհաննիսյան, Ա. Հայրապետյան
Բացակայում էր՝ Ռ. Մուրադյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մանուչարյան

1. **«ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները**

1. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետին համապատասխան՝ կոմիտեի կողմից ստացվել է հարցման մասին տեղեկատվություն, որի արդյունքում պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ն, չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև բավարարում է հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները:
2. «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացրել է հրավերով սահմանված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալ կետերը՝ գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. **Պայմանագիր կնքելու որոշում**

Գնահատող հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 21-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձայն որի՝

Չափաբաժին 1 - Կոմիտեի վեբ կայքի ստեղծման ծառայություններ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/ | Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/ | Անհամապատասխանության համառոտ նկարագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Վերէքս Թեքնոլոջիս ՍՊԸ | | X | բոլոր փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, ընթացակարգի ծածկագիրը սխալ էր գրված: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 2 | Վեբ Ստուդիո Ուան ՍՊԸ | X | | |
| 3 | Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ | X | | |

| Մասնակիցների զբաղեցրած տեղերը | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/ | Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, դրամ,/ |
|---|---|---|---|
| 1 | Վեբ Ստուդիո Ուան ՍՊԸ | X | 1,320,000 |
| 2 | Վեբէքս Թեքնոլոջիս ՍՊԸ | | 4,000,000 |
| 3 | Հելիքս Կոնսալտինգ ՍՊԸ | | 9,800,000 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գին առաջարկած մասնակցին նախապատվություն տալու սկզբունք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լ. Մանուչարյանին:

Հեռախոս՝ 060-474142:

Էլեկտրոնային փոստ՝ gnumner@cadastre.am:

Պատվիրատու՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ________ Մ. Խարատյան

Անդամներ՝ ________ Հ. Հովհաննիսյան

________ Ա. Հայրապետյան

Քարտուղար՝ ________ Լ. Մանուչարյան